«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հետազոտող ուսուցիչ՝ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԵՐՃՈՒՀԻ և ԱՐՄԷՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Մենթոր ուսուցիչ_____ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐ- 2023

ԹԵՄԱ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 5

1.1 Դպրոցական կրթությունը՝ ֆինանսական գրագիտության համատեքստում 5

1.2 Դպրոցում՝ տնտեսագիտության դասավանդման ժամանակ կիրառվող դասավանդման ժամանակակից մեթոդները 10

ԳԼՈՒԽ 2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁևԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 18

2.1 Հետազոտական աշխատանքի իրականացում, արդյունքների վերլուծություն և ամփոփում 18

2.1.1 Հետազոտության I փուլ: Ֆինանսական կրթության վերաբերյալ ուսուցիչների հարցումների արդյունքների վերլուծություն 19

2.1.2 Հետազոտության II փուլ: Կրտսեր դպրոցականներին տրված առաջադրանքների մեթոդական վերլուծություն և արձանագրում 24

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 24

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 35

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 36

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր անձ առօրյայում և կենսագործունեության տարբեր ոլորտներում շարունակ առնչվում է ֆինանսական խնդիրների հետ, որոնց թվում առավել մեծ կենսական նշանակություն ունեն հատկապես անձնական ֆինանսների կառավարմանը վերաբերող խնդիրները: Այդ խնդիրների արդյունավետ լուծումը պահանջվում է ֆինանսական գրագիտության բավարար մակարդակ, ինչը կարող է ձեռք բերվել միայն նպատակային կրթական ծրագրերի շնորհիվ:

Ֆինանսական կրթության այդ ծրագրերը վերաբերում են հանրության բոլոր անդամներին և աստիճանական զարգացում են ունենում, որպես շարունակական գործընթաց: Այդ գործընթացի հիմնական օղակներից մեկը հանրակրթական դպրոցն է, որտեղ հնարավոր է անձի զարգացման վաղ տարիքից ներդնել անձնական ֆինանսները կառավարելու սովորույթ, այն դարձնել կենսակերպի անբաժանելի մաս և ձևավորել որպես մշակույթ [1, էջ 12]:

Ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունները ուղղակիորեն շոշափելի չեն, դրանց արդյունքները, որպես կանոն, կարող են գնահատվել միայն որոշակի ժամանակահատվածից հետո [7]:

Հանրակրթական դպրոցներում ֆինանսական կրթության իրականացման արդյունավետ ուղիներից է միջառարկայական ինտեգրումը, երբ ֆինանսներին վերաբերող բովանդակային նյութը ներառվում է գործող առարկաներից մի քանիսի ծրագրերում: Ինտեգրման մոտեցումը թույլ է տալիս, չավելացնելով դասաժամային ծանրաբեռնվածությունը, ֆինանսների կարևորությունը լուսաբանել ուսումնական տարբեր առարկաներում դիտարկվող իրավիճակների վերլուծության, օրինակների պարզաբանման և խնդիրների լուծման ընթացքում [1, էջ 12]:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ տվյալ կրթական ծրագիրը հանրակրթական դպրոց է ներմուծվել բավականին ուշ՝ շուրջ երեք տարի և պետք է պարզել՝ ինչ գործառույթներ է իրականացնում ֆինանսական կրթությունը կրտսեր դպրոցի մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, և դրանք արդյո՞ք արդյունավետորեն են անդրադառնում երեխաների կրթության վրա:

Հետազոտական աշխատանքի նպատակը տարրական դասարանների մաթեմատիկական կրթության համատեքստում՝ ֆինանսական բաղադրիչի գործառույթների ուսումնասիրումն ու վերհանումն է:

Հետազոտության օբյեկտը կրտսեր դպրոցականի տնտեսագիտական գրագիտության ձևավորումն է ֆինանսական գրագիտության ձևավորման համատեքստում

Հետազոտության առարկան մաթեմատիկայի դպրոցական դասընթացում ֆինանսական տնտեսագիտության ներառման և ուսուցման գործընթացն է:

Ուսումնասիրության խնդիրները՝

- ✓ ուսումնասիրել ֆինանսական կրթության բաղադրիչի բովանդակությունը,
- ✓ ուսումնասիրել ֆինանսական բաղադրիչի՝ մաթեմատիկական կրթության համատեքստում ինտեգրման առանձնահատկությունները,
- ✓ իրականացնել հետազոտական աշխատանք՝ պարզելու ֆինանսական բաղադրիչի գործառույթները տարրական դասարանների մաթեմատիկական կրթության համատեքստում,
- ✓ կատարել եզրակացություն հետազոտական աշխատանքի արդյունավետության վերաբերյալ:

Հետազոտության մեթոդները. հետազոտության խնդրի վերաբերյալ մանկավարժական, մեթոդական գրականության վերլուծություն, համակարգում, համեմատություն, ընդհանրացում:

- ➢ հարցաթերթի մեթոդը,
- ➢ զրույց,
- ➢ հետազոտությունների արդյունքների վերլուծություն, հաշվարկման մեթոդներ՝ արձանագրում, սանդղակի կազմում:

Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, 2 գլխից, գրականության ցանկից, առաջարկությունից և հավելվածից :

ԳԼՈՒԽ 1

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1.1 Ֆինանսական կրթությունը դպրոցում

Ներկայումս ֆինանսական կրթությունը դպրոցում համարվում է որպես առաջնային կարևորություն ունեցող: Նպատակը սովորողների անձնական ֆինանսների կառավարման կարողությունների զարգացումն է, ինչպես նաև ֆինանսապես գրագետ անձի ձևավորումը, անձ, ով կունենա այնպիսի գիտելիքներ, հմտություններ և մշակույթ, որոնք հնարավորություն կտան լինելու տեղեկացված, անձնական ֆինանսների վերաբերյալ կայացնելու պատասխանատու որոշումներ, ձեռնարկելու իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ [1]:

Ֆինանսական կրթության հիմնական նպատակը սովորողների մոտ ձևավորել անհրաժեշտ նվազագույն ֆինանսկան գիտելիքներ, հմտություններ, վերաբերմունք և վարքագիծ, նպաստել ֆինանսապես գրագետ անձի ձևավորմանը: Այն ներառում է 7 թեմատիկ ոլորտներ.

1. Ընդհանուր տնտեսական հասկացությունների տիրապետում,
2. Անձնական բյուջեյի կառավարում,
3. Խնայողություններ և երակարաժամկետ պլանավորում,
4. Պարտքերի կառավարում,
5. Ֆինանսական ծառայությունների արդյունավետ ընտրություն,
6. Անձնական իրավունքների պաշտպանություն,
7. Ֆինանսական խարդախությունների և զեղծարարությունների կանխարգելում և դրանցից պաշտպանություն [2,էջ 5]:

Առօրյայում մարդիկ, անկախ տարիքից, գործ են ունենում փողի հետ: Ուստի կարևոր է ձևավորել անհրաժեշտ գիտելիք, հմտություններ, վերաբերմունք և վարքագիծ, որոնք կնպաստեն անձի գիտակցված, արդյունավետ և պատասխանատու ֆինանսական որոշումների կայացմանը:

Դպրոցական կրթությունը ֆինանսական գրագիտության համատեքստում՝ իրականացվում է ինտեգրված դասերի և արտադպրոցական գործունեության տեսքով [1,2]:

Ներկայումս ֆինանսական կրթության գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի տարրերը ինտեգրված են <<Ես և շրջակա աշխարհը>> և <<Մաթեմատիկա>> և <<Հասարակագիտություն>> առարկաների մեջ:

Մաթեմատիկական կրթության բովանդակության մեջ ֆինանսական բովանդակությամբ հարցերի ներառումը նպատակ ունի, մյուս կողմից, բարենպաստ ներգործություն ունենալու <<Մաթեմատիկա>> ուսումնական բնագավառի կրթական խնդիրների արդյունավետ լուծման վրա: Մաթեմատիկական գրագիտություն ունենալու առանցքային (համապիտան) կոմպետենցիան ենթադրում է կյանքի տարբեր իրադրություններ ներկայացնող համատեքստում մաթեմատիկական գիտելիքներ ու մեթոդներ կիրառելու կարողություն [2,3,4]:

Ֆինանսներին առնչվող իրավիճակներն ունեն այլ առանձնահատկություններ, որ վերաբերում և հետաքրքրում են բոլորին, ուստի մաթեմատիկայի ուսուցման ընթացքում դրանց դիտարկման շնորհիվ՝

ա) բարենպաստ իրադրություն է ստեղծվում բոլոր սովորողներին ուսումնական ակտիվ աշխատանքի մեջ ներգրավելու համար,

բ) տեսանելի և ընկալելի է դառնում մաթեմատիկական նյութի կիրառական նշանակությունը, զգալիորեն ուժեղանում են միջառարկայական կապերը,

գ) նոր հնարավորություններ են ստեղծվում մաթեմատիկայի ուսուցման ընթացքում գործնական և հետազոտական աշխատանքների կատարման համար,

դ) բարենպաստ պայմաններ են առաջանում ուսումնական այնպիսի աշխատանքների համար, որոնք ծառայում են սովորողների դաստիարակության և սոցիալական հմտությունների զարգացման նպատակով [2,էջ 15]:

Ֆինանսական կրթության հիմնական գործառույթներն են.

1. Օգնում է պլանավորել ապագան: Ապագան պլանավորելու համար պետք է հասկանալ ձեր ունեցած խնայողությունների տարբեր տարբերակները և, ավելին, ինչպես դրանք կարող են ազդել ձեր նպատակների վրա:
2. Օգնում է կառավարել կուտակված պարտքերը կամ բացառել այն: Դուք կսովորեք, թե ինչպես բյուջե կազմել և հասկանալ, թե ինչպես է ձեր եկամուտը համեմատվում ձեր ծախսերի հետ՝ ապագայում պարտքեր կուտակելուց խուսափելու համար[2,5]:
3. Օգնում է փողի հետ կապված գիտակված որոշուներ կայացնել,
4. Օգնում է ծախսերի հետ կապված հիմնավորված որոշումներ կայացնել,
5. Նպաստում է երկրի տնտեսական աճի բարձացմանը,

6. Ֆինանսական կրթությունը երիտասարդներին պատրաստում է հասուն կյանքին: Տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ երիտասարդ սերունդները, ավելի ֆինանսական ներգրավված կլինեն չափահաս տարիքում, քան ավագ սերունդները և կօգտագործեն ֆինանսական ծառայությունները իրենց կյանքի ընթացքում տարբեր գործողություններ կատարելու համար: Նրանք, ստիպված կլինեն ավելի շատ ֆինանսական ռիսկեր կրել որպես չափահաս, քան իրենց ծնողները: Նրանք, պատասխանատու կլինեն իրենց կենսաթոշակային խնայողությունների և ներդրումների պլանավորման, ինչպես նաև իրենց բժշկական կարիքները հոգալու համար: Նրանք կարող են նաև գործ ունենալ ավելի բարդ և նորարարական ֆինանսական ապրանքների և ծառայությունների հետ [2,10]:

Ֆինանսական գրագիտության հիմունքները դասավանդելիս, դպրոցում՝ դասարանային դասերը գերակշռող դեր են խաղում, քանի որ, այս գիտության անհատական ուսումնասիրությունը բավականին դժվար է դպրոցականի համար: Դասը որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողի մշտական գործունեության ձև է, որն օգտագործվում է համակարգված, լուծելով սովորողների՝ ուսուցման, դաստիարակության և զարգացման խնդիրները [1,2]:

Ներկայումս կան մի քանի չափանիշներ, ըստ որի կարելի է դասակարգել դասերի տեսակները: Կախված սովորողների կողմից նյութի յուրացման տարբեր հոգեբանամանկավարժական փուլերի, լինում են՝

- նոր նյութի ուսումնասիրության դասեր,
- գիտելիքները, հմտություններն ու կարողություններն ամրապնդող դասեր,
- կրկնողական և ընդհանացնող դասեր,
- համակցված դասեր:

Նոր նյութի ուսումնասիրության դասերը կարող են կազմակերպվել, ինչպես սեմինարների, այնպես էլ խաղերի տեսքով: Այս տեսակի դասի նպատակն է՝ ուսումնասիրել և սովորողներին իրազեկել նոր նյութով: Հիմնական ժամանակը նվիրված է նոր գիտելիքների և հմտությունների փոխանցմանն ու յուրացմանը: Դասի ընթացքում օգտագործվում են սովորողների գործունեության բարձրացման տարբեր մեթոդներ՝ ներկայացված նյութին խնդրահարույց բնույթ տալը, ուսումնասիրվող նյութում ընդգրկել տարբեր օրինակներ՝ ներառելով շրջապատող իրականությունից իրական օրինակներ, սովորողներին ներգրավելով ուսուցչի կողմից առաջադրված հարցերի ակտիվ քննարկման մեջ [2,8]:

Ուսուցիչն ակտիվացնում է աշակերտների մտավոր գործունեությունը, համակարգում նրանց ստացած գիտելիքները։

Դասի հաջորդ տեսակը նոր գիտելիքների, հմտությունների և կարողություններեի համախմբման դասն է։ Սովորաբար այս տեսակի դասերը դասավանդվում են անմիջապես նոր նյութեր սովորելուց հետո։ Նման դասի նպատակն արդեն հայտնի գիտելիքների երկրորդական ընկալումն է, դրանց կիրառման հմտությունների և կարողությունների զարգացումը։ Այս տեսակի դասերի խնդիրներն ուղղված են՝ կրթական և գործնական գործունեության գործընթացում՝ հմտությունների և կարողությունների զարգացմանն ու ձևավորմանը [1,2,3]։

Կրկնողական և ընդհանրացնող դասերը, սովորաբար անցկացվում են թեմայի կամ ծրագրի մեծ հատվածի ուսումնասիրության ավարտին։ Կրկնող ընդհանրացնող դասի նպատակը՝ սովորողների տնտեսագիտության իմացության զարգացումն է, անհատական հասկացությունների ընդհանրացնումը, առարկայի մասին գիտելիքների համախմբումը։

Տարբեր տարիքային խմբերի դպրոցականների շրջանում, ֆինանսական գրագիտության զարգացման արդյունավետ միջոց են հանդիսանում՝ խաղային տեխնոլոգիաները, որոնք նմանակում են կյանքի տարբեր իրավիճակներ և թույլ են տալիս ավելի խորը պատկերացում կազմել ուսումնասիրված սոցիալական երևույթների և հարաբերությունների կառավարման տեսանկյունից։

Մեթոդական առաջադրանքներն են՝

- նկարչական,
- տրամաբանական փոքրիկ առաջադրանքներ,
- կատակ խնդիրներ,
- թերի վիճակով առաջադրանքներ,
- սյուժե - դերային խաղեր։

Մաթեմատիկայի դասընթացում ֆինանսական կրթության իրականացումը չպետք է սահմանափակվի միայն լուսաբանող օրինակներով, ուսուցանող խնդիրներով ու վարժություններով։ Առկա են տարբեր եղանակներ և մեթոդներ կրթական ծրագիրը արդյունավետ իրականացնելու համար, մասնավորապես՝

ա) դասավանդումը պետք է ուղեկցվի տարբեր խաղերով, գործնական աշխատանքներով, թեստերով, խմբային քննարկումներով և այլ ակտիվ մեթոդներով,

որոնք կխթանեն սովորողի ինքնադրսևորումը, ինքնակազմակերպումը, իրավիճակին համապատասխան կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու ունակությունը [2,12],

բ) թեմայի առանձնահատկությունից կախված՝ պետք է հանձնարարել կարճաժամկետ և երկարաժամկետ ուսումնասիրություն պահանջող գործնական, հետազոտական և նախագծային աշխատանքներ, որոնք կնպաստեն անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու, դիտումներ և վերլուծություններ կատարելու, ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելու, հետազոտության արդյունքները պատշաճ մակարդակով ներկայացնելու կարողությունների զարգացմանը,

գ) անձնական ֆինանսների կառավարման մշակույթ ձևավորելու գործում կարևոր նշանակություն ունեն ֆինանսական կազմակերպություններ կատարվող այցելությունները, էքսկուրսիաները, սեմինարների և ֆինանսական խմբակների պարապմունքները, ստուգատեսների անցկացումը և այլ միջոցառումների կազմակերպումը [2]:

Այսպիսով, դպրոցականների ֆինանսական կարողությունների ձևավորման համար գոյություն ունեն տարբեր տեսակի դասընթացներ, որոնց զարգացման համար անհրաժեշտ է ունենալ մանկավարժական փորձ՝ պահպանելով սովորողների ֆինանսական գրագիտության ձևավորմանն ուղղված մեթոդական մոտեցումներն ու սկզբունքները:

1.2 Ֆինանսական կրթության հիմնական սկզբունքները

Ֆինանսական կրթության հիմքում դրված են 10 սկզբունքներ, որոնք կիրառումն ավելի արդյունավետ և կառուցողական կդարձինի ուսուցչի աշխատանքը:

1. Մենք բոլորս առնչվում ենք ֆինանսական աշխարհի հետ, ուրեմն լինենք նաև ֆինանսապես առողջ: Ֆինանսական կրթությունը չունի մանսագիտական բնույթ, կապված է կյանքի հմտությունների հետ, ինչպես օրինակ՝ լողալը կամ համակարգչից օտգվելը [2,13]: [1]
2. Փողը պաշտամունք չէ, փողը գործիք է, ռեսուրս, միջոց: Փողը գործիք է, որի դերը, սակայն, չպետք է թերագնահատել: Իրական կյանքում հաճախ հանդիպում են իրավիճակներ, երբ փողը ֆետիշացվում է և ընկալվում որպես նպատակ: Դպրոցական կրթության ընթացքում կարևոր է բացառել նման դրսևորումները: Սովորողների մեջ անհրաժեշտ է ձևավորել վերաբերմունք, որ փողը գործիք է նպատակին հասնելու և անկանխատեսելի դեպքերին պատրաստ լինելու համար:

[1] https://finance.aspu.am/

Առանձնահատուկ կարևորություն ունի փողը բարիք գործելու նպատակով կիրառելու գիտակցության ձևավորումը: Երեխաները պետք է համոզմունք ունենան, որ ոչ թե փողն է ինքնին արժեք, այլ կարևոր է՝ որոշակի նպատակներով գիտակցաբար կիրառումը՝ ի նպաստ անձի, ընտանիքի, հասարակության [2, էջ 7]:

3. Պատասխանատու որոշումներ

Չկան բացարձակ ճշմարտություններ

Անձնական ֆինանսների կառավարումն ունի սուբյեկտիվ բնույթ՝ կախված է անձից և իրավիճակից: Ֆինանսական կրթության ինտեգրման արդյունքում անհրաժեշտ է քննարկել իրավիճակին համապատասխան հնարավոր լուծումները, այլ ոչ թե տրամադրել պատրաստի արդյունքներ, պետք է սովորողներին թույլ տալ ինքնուրույն զարգացնել որոշումներ կայացնելու կարողությունը, այլ ոչ թե ներկայացնել որոշակի պատրաստի պատասխաններ: Այս մոտեցումը կօգնի սովորողներին հետագայում գիտակցված, արդյունավետ և պատասխանատու որոշումներ կայացնելու, ինչպես նաև կրել դրանց պատասխանատվությունը:

4. Ակտիվ ուսուցում

Ուսուցման կապը իրական կյանքի հետ

Ֆինանսական կրթության ընթացքում ցանկալի է կիրառել ուսուցման աշակերտակենտրոն մոտեցում՝ համադրելով ակտիվ ուսուցման մեթոդները.

- ✓ Խաղերի և խմբային աշխատանքների կիրառումը կխթանի սովորողների ինքնադրսևորումը, ինքնակազմակերպումը, իրավիճակին համապատասխան կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու ունակությունը[2, էջ 8]:
- ✓ Նախագծային առաջադրանքները կնպաստեն անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու, դիտումներ և վերլուծություն կատարելու, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու, հետազոտության արդյունքները ներկայացնելու կարողությունների զարգացմանը:
- ✓ Էքսկուրսիաների և այցելությունների կազմակերպում դեպի ֆինանսական կազմակերպություններ կարևոր նշանակություն ունի դրանց ներքին աշխատանքին ծանոթանալու և որպես սպառող ինքնավստահություն ձեռք բերելու հարցերում:

5. Ազդեցության մասշտաբի էֆֆեկտ

Ուսուցչից՝ սովորողին, սովորողից՝ ընտանիքին

Ֆինանսական կրթությունը դպրոցում հնարավորություն է տալիս ոչ միայն ձևավորելու անհրաժեշտ գիտելիք, հմտություններ, վերաբերմունք և վարքագիծ

սովորողների մեջ, այլև այդ գործընթացին ակտիվորեն ներգրավելու ուսուցիչներին և սովորողների ծնողներին: Սովորող, ուսուցիչ և ծնող արդյունավետ համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի խթանել ֆինանսական ունակությունների զարգացումը հասարակության բոլոր շերտերում: Սովորող, ուսցիչ և ծնող արդյունավետ համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի խթանել ֆինանսական ունակությունների զարգացումը հասարակության բոլոր շերտերում [2, էջ 8]:

6. Զուգահեռ ինտեգրում

   Ֆինանսական կրթությունը ինքնին առարկա չէ

   Հաշվի առնելով սովորողների առարկայական ծանրաբեռնվածությունը և միջազգային փորձը՝ ֆինանսական կրթությունը ներդրվել է հանրակրթական դպրոցում՝ ինտեգրման եղանակով: Կարևորվում է ֆինանսական կրթության ինտեգրումը առարկայական թեմաներում այնպես, որ դասերի ընթացքում հավասարապես շեշտադրվեն և՛ առարկայական, և՛ ֆինանսական կրթության նպատակները:

7. Համակարգային մոտեցում

   «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հասարակագիտություն»

   Արդյունավետ ինտեգրման տեսանկյունից կարևոր է ֆինանսական կրթության համակարգային մոտեցումը ըստ կրթական մակարդակների: Ընտրված 4 առարկաները փոխլրացնում են միմյան և ապահովում ֆինանսական կրթության շարունակականությունը: Զուգահեռաբար երկու ուսումնական առարկաների առկայությունը գրեթե բոլոր դասարաններում ապահովում է գիտելիքի և հմտությունների սիներգիկ զարգացում:

8. Նվազագույն կոմպետենցիաներ

   Ֆինանսները դինամիկայի մեջ

   Ներկայումս համընդգրկուն և ազգային զարգացումները էապես ադում են նաև ֆինանսական աշխարհի վրա: Չնայած անձնական ֆինանսները կառավարելու հիմնարար սկզբունքներն անփոփոխ են՝ ի հայտ են գալիս ֆինանսական նոր ծառայություններ, գործիքներ և իրավիճակներ: Այս տեսանկյունից ֆինանսական կրթությունը դպրոցում շեշտադրում է բազային նվազագույն անհրաժեշտ կարողությունները, որոնք կօգնեն սովորողներին հետագայում ճշգրիտ կողմնորոշելու դինամիկ զարգացող ֆինանսական աշխարհում [2, էջ 9]:

9. Շարունակականություն

   Տարրական, միջին և ավագ դպրոցներ՝ 2-11-րդ դասարաններ

   Ֆինանսական կրթությունը շարունակական է: Սկսած տարրական դպրոցից (2-րդ դասարան)՝ պարզի բարդին անցնելու սկզբունքով դա համակարգված շարունակվում է մինչև ավագ դպրոց (մինչև 11-րդ դասարան), ընդ որում՝ բոլոր հոսքերում և ենթահոսքերում: Շարունակականության ապահովումը նպաստում է անձի զարգացման վաղ տարիքից ֆինանսներ կառավարելու հմտությունների ձևավորմանը, որոնք զարգանալու են նրա ողջ կյանքի ընթացքում: Կարևոր է նաև ուսուցիչների կողմից ուսումնական նյութի հարմարեցումը նրանց հնարավորություններին:

10. Աստիճանական աճ

    Ֆինանսական կրթությունը նպատակահարմար է իրականացնել տարրական կարողություններից աստիճանաբար բարդին անցնելու սկզբունքով՝ շեշտադրելով գործնական գիտելիքները [2, էջ 9]:

1.3 Դպրոցում՝ տնտեսագիտության դասավանդման ժամանակ կիրառվող դասավանդման ժամանակակից մեթոդները

Ուսուցման մեթոդը՝ ուսուցչի և սովորողների փոխկապակցված գործունեության միջոց է, ուսուցման զարգացման և կրթության նպատակներին հասնելու համար: Դասավանդման մեթոդների ընտրությունը կախված է ուսումնական գործընթացի բազմաթիվ հանգամանքներից և պայմաններից, առարկայի բնույթից և բովանդակությունից, մասնավորապես ուսուցչի գիտելիքների և հմտությունների մակարդակից: Ուսուցիչը պետք է իմանա և հասկանա մեթոդի էությունը, դասավանդման մեթոդների դասակարգումը, այս կամ այն տեսակի դասակարգման հիմքը և կարողանա դրանք կիրառել տարբեր իրավիճակներում և համադրություններում [7,8,12]:

Օգտագործելով միմյանցից բազմազան կամ լրացնող մեթոդների մեկ կամ մի քանի համակարգ, որը կենտրոնացած է ընդհանուր նպատակին հասնելու համար, ուսուցիչը հետադարձ կապ է հաստատում աշակերտների հետ, բացահայտում գիտելիքների և հմտությունների յուրացման մակարդակը, որոշում մեթոդների կիրառման

արդյունավետությունը և կատարում ճշգրտումներ՝ դրանով իսկ բարձրացնելով նրա մասնագիտական կարողությունների մակարդակը:

Կարևոր է հաշվի առնել՝

- դասընթացի ընդհանուր նպատական ու խնդիրները, առարկայի առանձնահատկությունները, թեմաները,
- ուսուցչի կողմից ընտրված ուսումնական նյութի բովանդակությունը,
- աշակերտների զարգացման մակարդակը, սովորելու ունակությունը, հնարավորությունները և տարիքային առանձնահատկությունները,
- մեթոդի կամ մեթոդների համադրության դերը՝ սովորողների ճանաչողական գործունեության զարգացման մեջ, նրանց գործունեությունը, անկախությունը և ստեղծագործականությունը, ժամանակը [2,11]:

Տնտեսագիտության դասերին օգտագործվող մեթոդները, կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- ուսումնական նյութի միակողմանի ներկայացում (ուսուցում, բացատրություն, դասախոսություն),
- ուսումնական նյութի երկկողմանի ներկայացում(երկխոսություն, բանավեճ, քննարկում, «մտքի փոթորիկ», խմբային աշխատանք, բիզնես խաղեր),
- էմպիրիկ փորձի լուսաբանում (տեղեկատվության, փորձի և այլնի փոխանակում),
- վերահսկողություն և հետադարձ կապ (զրույց, խորհրդատվություն, թեստային առաջադրանքներ, քննություն) [9,11]:

Դպրոցում տնտեսագիտության դասեր կազմելիս կարևոր է օգտագործել առկա ուսուցման մեթոդները, քանի որ դրանք սովորողներին հնարավորություն են տալիս գիտակցել տնտեսագիտության գործնական կարևորությունը, գործնականում օգտագործել տեսական գիտելիքներ ըստ այդ առարկայի, հասկանալ առանձին ձեռնարկությունների գործունեության կառուցվածքը, մեխանիզմը և այլն: Տնտեսագիտության դպրոցական դասընթացում, նպատակահարմար է օգտագործել ակտիվ ուսուցման տեսակը, որպես բիզնես խաղ: Այն նպաստում է ոչ միայն մասնագիտական, այլ նաև աշխատանքային գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորմանը [8,10,11]: Բիզնես խաղը պետք է ներառի՝

- բիզնես խաղի մասին նախնական տեղեկատվություն,
- բիզնես խաղ պատրաստելու և անցկացնելու մեթոդաբանություն,

- տարբեր փաստաթղթերի հավաքածու:

Այսպիսով, ուսուցման տարատեսակ մեթոդների օգտագործումը, դրանք համատեղելով, հնարավորություն է տալիս լավագույն արդյունքի հասնել դպրոցականներին՝ տնտեսագիտություն դասավանդելու, առարկայի բազմակողմանի գիտելիքներ ստանալու, ստեղծագործական մտածողություն զարգացնելու, նպատակներ դնելու և դրանք լուծելու ունակության մեջ:

1.4 Մաթեմատիկայի դասագրքերի ուսումնասիրություն

Դասագրքերի հեղինակները	Ընդհանուր առաջադրանքներն ըստ դասարանների				Ընդհանուր ֆինանսական առաջադրանքները				Ընդհանուր առաջադրանքների մեջ ներառված ֆինանսական առաջադրանքների քանակը տոկոսներով			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
Ս.Մկրտչյան Ս.Իսկանդարյան Ա.Աբրահամյան	477	748	749	751	2	30	82	71	0.5	4	11	9

Ըստ դասագրքերի ուսումնասիրության արդյունքների պարզեցինք, որ ընդհանուր առաջադրանքների մեջ ներառված՝ ֆինանսական առաջադրանքները, առավել քիչ հատկացված են առաջին դասարանում և առավել շատ երրորդ դասարանում: Երկրորդ դասարանում առաջադրանքների քանակը առավել շատ է, քան առաջինում, իսկ չորրորդում ընդհակառակը՝ ավելի քիչ է քան երրորդում:

Իմ կարծիքով ֆինանսական առաջադրաքներն ըստ դասարանների պետք է ավելի շատ ընդգրկված լինեն, սակայն համեմատելով ընդհանուր առաջադրանքների մեջ ներառված ֆինանսական առաջադրանքների քանակը տոկոսներով՝ պարզեցինք, որ չորրորդ դասարանում առաջադրանքների քանակը նվազում է:

ԳԼՈՒԽ 2
ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2.1 Հետազոտական աշխատանքի իրականացում, արդյունքների վերլուծություն և ամփոփում

Տարրական դասարանների մաթեմատիկական կրթության համատեքստում՝ ֆինանսական բաղադրիչի գործառույթների ուսումնասիրման ու վերհանման համար տեսականորեն հիմնավորման նպատակով մեր կողմից իրականացվել է հետազոտական աշխատանք: Հետազոտական աշխատանքն անցկացվել է 2023 ուսումնական տարվա փետրվար-մարտ ամիսներին: Հետազոտական աշխատանքներն իրականացվել են ուսուցիչների և 4-րդ դասարանների աշակերտների շրջանում:

Հետազոտական աշխատանքի նպատակն էր տարրական դասարանների մաթեմատիկական կրթության համատեքստում՝ ֆինանսական բաղադրիչի գործառույթների ուսումնասիրումը, վերհանումը, ինչպես նաև իրականացնելու հետազոտական ստուգում պարզելու՝ ֆինանսական բաղադրիչի գործառույթները տարրական դասարանների մաթեմատիկական կրթության համատեքստում:

Հետազոտական աշխատանքներին ներգրավված են եղել.

- 40 աշակերտ,
- 27 ուսուցիչ

Փորձարարական աշխատանքները կատարել եմ Արտաշատ քաղաքի հ3 հիմնական դպրոցի չորրորդ դասարանում:

Ուսուցիչների հետ զրուցելու ընթացքում պարզել եմ, թե աշակերտները նախնական ինչ գաղափար ունեն ֆինանսական կրթության վերաբերյալ:

Հետազոտությունը իրականացրել եմ 2 փուլով. I փուլում հարցաթերթիկով հետազոտել եմ ուսուցիչներկի կարծիքը ֆինանսական կրթության վերաբերյալ, II փուլում աշակերտներին հանձնարարել եմ գրավոր աշխատանքներ, իսկ ուսուցիչներին որպես մեթոդական առաջարկ վարել եմ ֆինանսական բաղդրիչներով դասեր:

2. 1.1 Հետազոտության I փուլ:
Ֆինանսական կրթության վերաբերյալ ուսուցիչների հարցումների արդյունքների վերլուծություն

Հարցումն իրականացվել է հարցաթերթիկի միջոցով:

Ուսուցիչներին առաջադրվել է յոթ հարց, բոլոր հարցերը վերաբերվել են ֆինանսկան կրթությանը: Հարցման նպատակն էր, պարզել, թե ինչպիսի դեր է կարատում ֆինանսկան կրթությունը կրտսեր դպրոցականի կյանքում, և ինչպիսի աշխատանքներ են կատարում ուսուցիչները՝ աշակերտներին ֆինանսական գիտելիքներ փոխանցելու համար:

Արդյունքների վերլուծությունները ներկայացնում եմ ստորև.

Համար 1 հարցին աշակերտների տված պատասխաններն ըստ առաջարկված տարբերակների

Այն հարցին, թե «Արդյո՞ք օգտակար է ֆինանսական կրթությունը կրտսեր աշակերտների համար», հարցվողների 100% պատասխանել է այո, պետք է ֆինանսական կրթության հիմքերը դնել դեռ տարրական դասարաններից (Տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ֆինանսական կրթության օգտակարությունը

Արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ հարցվող բոլոր ուսուցիչների կարծիքով ֆինանսական կրթությունը շատ կարևոր է, դպրոցական երեխան դեռ տարրական դասարաններից պետք է ունենա պատկերացում փողի, մետաղադրամի և թղթադրամ, ՀՀ դրամի մասին, կարողանա հաշվարկներ և գնումներ կատարի, անձնական բյուջեյի, մշտական և ոչ մշտական եկամուտների մասին պատկերացում ունենա և այլն:

Համար 2 հարցին աշակերտների տված պատասխաններն ըստ առաջարկված տարբերակների

Հաջորդ հարցին, թե արդյոք «Դպրոցական կրթության միջոցով, կարո՞ղ են ձևավորվել՝ ֆինանսապես գրագետ անձիք», հարցվողների 57.1% պատասխանել է մասամբ, իսկ 42.9% պատասխանել է այո, դպրոցական կրթության միջոցով կարող են ձևավորվել ֆինանսապես գրագետ անձինք (տես գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Դպրոցական ֆինանսական կրթությունը կարո՞ղ է ձևավորել ֆինանսապես գրագետ անձ

Կարող ենք եզրակացնել, որ դպրոցը կարող է հիմքերը դնել, տալ ընդհանուր պատկերացում, սակայն դա բավարար չէ ներկայիս անընդհատ զարգացող և փոփոխվող ֆինանսական և տեխնիկական ժամանակաշրջանում, մյուս մասը, սակայն, այն կարծիքին էր, որ դպրոցը կարող է ձևավորել ֆինանսապես գրագետ անձ:

Համար 3 հարցին աշակերտների տված պատասխաններն ըստ առաջարկված տարբերակների

«Աշակերտներին՝ ֆինանսական գիտելիքներ փոխանցելու համար, ի՞նչ մեթոդներ եք կիրառում» հարցին 61.5% պատասխանել է խաղերով, 30.8%՝ խմբային աշխատանքներով, իսկ 7.7%՝ համապատասխան հետազոտական հանձնարարություններով (տես գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Ֆինանսական գիտելիքների փոխանցման միջոցներ

Այսպիսով ուսուցիչների գերակշռող մեծամասնությունը ֆինանսական գիտելիքներ կրտսեր դասարաններին փոխանցում է խաղերի միջոցով:

Համար 4 հարցին աշակերտների տված պատասխաններն ըստ առաջարկված տարբերակների

Այն հարցի, թե «Դասի արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ սովորողներին առաջարկու՞մ եք դասագրքից դուրս, լրացուցիչ ֆինանսական կրթությանը վերաբերող խնդիրներ» հարցին հարցվողների 52.9% պատասխանել է այո, հաճախ եմ առաջարկում, իսկ 47.1%՝ երբեմն (տես գծապատկեր 4):



Գծապատկեր 4. Արդյոք տանը հանձնարարվում է լրացուցիչ խնդիրներ ֆինանսական կրթությանը վերաբերող

Համար 5 հարցին աշակերտների տված պատասխաններն ըստ առաջարկված տարբերակների

Հարցին, թե «Աշակերտներին գումարի մասին գաղափար տալու համար, ի՞նչ աշխատանքներ եք կատարում» հարցվողների 66.7% պատասխանել է, որ ստեղծում է պրոբլեմային իրավիճակ, իսկ 33.3%՝ լրացուցիչ խնդիրներ են տալիս (տես գծապատկեր 5):



Գծապատկեր 5. Գումարի մասին գաղափար տալու համար ուսուցչի կողմից իրականացվող աշխատանքներ

Ուսուցիչների մեծ մասը գումարի մասին պատկերացում տալու համար առավել հաճախ ստեղծում են պրոբլեմային իրավիճակներ:

Համար 6 հարցին աշակերտների տված պատասխաններն ըստ առաջարկված տարբերակների

Հաջորդ «Դասագրքերում զետեղվա՞ծ են, աշակերտների՝ ֆինանսական կրթության զարգացման համար, նախատեսված խնդիրներ» հարցին հարցվողների 100%-ը պատասխանել է այո, կան:

Գծապատկեր 6. Դասագրքերում ֆինանսական կրթության համապատասխան խնդիրների առկայությունը

Այն հարցին, թե «Տարրական դասարաններում, բացի Մաթեմատիկա առարկայից, կա՞ն այլ առարկաներ, որոնք նպաստում են ֆինանսական կրթության զարգամանը» բոլոր հարցվողները (100%) պատասխանել են այո, ես և շրջակա աշխարհը:



Գծապատկեր 7. Կան այլ առարկաներ, որոնք նպաստում են ֆինանսական կրթության զարգացմանը

Այսպիսով, ընդհանրացնելով հարցման արդյունքների վերլուծությունները, առանձնացրել եմ հետևյալ հիմնական կետերը՝

1. Ուսուցիչների կարծիքով՝ ֆինանսական կրթությունն օգտակար է աշակերտների համար, դեռ կրտսեր դասարաններից պետք է երեխային տալ պատկերացում փողի, դրամի մասին, սովորեցնել կատարել ինքնուրույն դրույթներ և այլն:
2. Դպրոցական կրթության միջոցով, կարող են ձևավորվել՝ ֆինանսապես գրագետ անձիք:
3. Աշակերտներին՝ ֆինանսական գիտելիքներ փոխանցելու համար, ուսուցիչների մեծ մասը կիրառում են խաղեր:
4. Աշակերտներին գումարի մասին գաղափար տալու համար, ստեղծում են պրոբլեմային վիճակներ:

2.1.2 Հետազոտության II փուլ

Կրտսեր դպրոցականներին տրված առաջադրանքների մեթոդական վերլուծություն և արձանագրում

1) Որքա՞ն դրամ պետք է վճարել ափսեներից յուրաքանչյուրի պարունակության համար:

Կրտսեր դպրոցականների 66.7% առաջադրանքը ճիշտ էր կատարել, 22.2%՝ ճիշտ էր սկսել, սակայն 1 հատ սխալ էր թույլ տվել, իսկ 11.11%-ը չէր կարողացել ճիշտ լուծել առաջադրանքը (տես գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1 առաջադրանքի ընդհանուր արդյունքները

2) Համեմատիր խմբերի գումարները ։

4050դրամ	1750 դրամ	2150 դրամ

Հարցվող դպրոցականների գերակշռող մեծամասնությունը առանց դժվարության հաղթահարեց առաջադրանքը: 88.9% ցուցաբերել է բարձր ցուցանիշներ, իսկ 11.1%՝ միջին (տես գծապատկեր 9):



Գծապատկեր 9. 2-րդ առաջադրանքի ընդհանուր արդյունքներ

3) Պաղպաղակի արժեքը 200 դրամ է: Անին ունի 200 դրամ, իսկ Արամը՝ 600: Կարո՞ղ են արդյոք նրանք միասին գնել 4 պաղպաղակ:

200
դրամ

Այս առաջադրանքը ճիշտ կատարել էին 81.8%-ը, իսկ 18.2%-ը ցուցաբերել էր միջին ցուցանիշներ(տես գծապատկեր 10):



Գծապատկեր 10. 3-րդ առաջադրանքի ընդհանուր արդյունքներ

4) Լուծի՛ր խնդիրը՝ ըստ նկարում բերված օրինակների ։

Աննան ունի 700 դրամ։ Կարո՞ղ է արդյոք նա գնել 2 կգ կեռաս և 1 կգ լոլիկ։

1 կգ-ը
300
դրամ

1 կգ-ը
100դրամ

Արդյունքները ներկայացված են գծապատկեր 11-ում:



Գծապատկեր 11. 4-րդ առաջադրանքի ընդհանուր արդյունքներ

5) Սրանք հինգ հազար դրամանոց թղթադրամներ են: Կարո՞ղ ես ասել, թե քանի՞ 1000 դրամանոց թղթադրամներով կարելի է փոխարինել երկու 5000 դրամանոց թղթադրամը:

Հարցվողների 57.1% ճիշտ է պատասխանել առաջադրանքին և ցուցաբերել բարձր արդյունքներ, 33.3%-ը՝ իջին, իսկ 9.5%՝ առաջադրանի լուծման հարցում դժվարաեցել է և ցուցաբերել ցածր արդյունք (տես գծապատկեր 12):



Գծապատկեր 12. 5-րդ առաջադրանքի ընդհանուր արդյունքներ

6) Քանի՝ 500 դրամանոց մետաղադրամներով կարելի է ստանալ՝

- 2000 (երկու հազար) դրամ,
- 5000 (հինգ հազար) դրամ,
- 7000 (յոթ հազար) դրամ,

- 12000 (տասներկու հազար) դրամ,

Առաջադրանքի լուծման արդյունքները ներկայացված են գծապատկեր 13-ում:



Գծապատկեր 13. 6-րդ առաջադրանքի ընդհանուր արդյունքներ

7) Ըստ աղյուսակում բերված տվյալների՝ լրացրո՛ւ այն:

Բանջարեղեն	1 կգ	2 կգ	3 կգ	4 կգ
	800 դրամ			
		600 դրամ		
			600 դրամ	

Հարցվողների 50% ճիշտ է կատարել առաջադրանքը, 36.7%՝ միջին ցուցանիշներ է ցուցաբերել, այսինքն ոչ բոլոր վանդակներն էին սխալ, իսկ 13.3%՝ չի կարողացել առաջադրանքը կատարել (տես գծապատկեր 14):



Գծապատկեր 14. 7-րդ առաջադրանքի ընդհանուր արդյունքներ

8) Արան գնեց 6 ձու և վճարեց 330 դրամ: Կարենը գնեց այդպիսի 8 ձու: Կարենը որքա՞ն վճարեց իր գնած ձվերի համար:



Գծապատկեր 15. 8-րդ առաջադրանքի ընդհանուր արդյունքներ

9) Սոնան գնեց գրիչ, մատիտ ու քանոն և վճարեց 750 դրամ: Աննան գնեց գրիչ ու քանոն և վճարեց 550 դրամ: Անին գնեց գրիչ ու մատիտ և վճարեց 500 դրամ: Ի՞նչ արժե այդ իրերից յուրաքանչյուրը:

Հարցվողների 53.3%-ին հաջողվել է ճիշտ լուծել խնդիրը, 26.7%-ը միտք ճիշտ էր հասկացել, սակայն պատասխանը սխալ էր ստացել, 20%-ը ցուցաբերել են ցածր արդյունք՝ չեն լուծել խնդիրը (տես գծապատկեր 16):



Գծապատկեր 16. 10-րդ առաջադրանքի ընդհանուր արդյունքներ

10) Որ դրամանիշից քանի հատ պետք է վերցնել՝ 3460 դրամ ունենալու համար:

Կատարի՛ր երեք տարբեր ընտրություն և յուրաքանչյուրին համապատասխան կազմի՛ր հավասարություն։



Գծապատկեր 17. 11-րդ առաջադրանքի ընդհանուր արդյունքներ



Գծապատկեր 18. Հարցման ընդհանուր ցուցանիշներ

Կատարված հետազոտության արդյունքնում աշակերտները (40 աշակերտ) ցույց են տվել հետևյալ արդյունքները.

- ✓ Երեխաների 65.9%-ը ունեն ֆինանսական պատկերացման բարձր մակարդակ,

- ✓ 20.5%՝ պատկերացման միջին մակարդակ,
- ✓ 13.6%՝ զարգացման ցածր մակարդակ,

Կատարել եմ մաթեմատիկայի դասագրքերի ուսումնասիրություն՝ ֆինանսական և տնտեսագիտական ուղղվածության տեսանկյունից, կատարել եմ դրանց մեթոդական և մասնագիտական վերլուծություն, առաջադրանքներով ստուգել եմ աշակերտների գիտելիքները։

Որպես մեթոդական առաջարկ ուսուցիչներին վարել եմ մաթեմատիկայի դասեր, հանձնարարվող նյութին զուգադրել՝ ֆինանսական, տնտեսագիտական բաղադրիչ պարունակող առաջադրանքներ և խնդիրներ։

Կազմակերպել եմ մաթեմատիկայի դասի ընթացքում խաղային ուսուցում՝ դերախաղի միջոցով, աշակերտները հանդես են եկել որպես ապրանք գնող կամ վաճառող. այս կերպ դարձրել եմ նյութին յուրացումը ավելի մատչելի։

Դասերին օգտագործել եմ տարաբնույթ զննական պարագաներ՝ թղթադրամներ, մետաղադրամներ, տարբեր առարկաներ, որոնք օգտագործվել եմ որպես վաճառքի ենթակա ապրանքներ։

Այս դասընթացի արդյունավետ աշխատանքի համար կարևոր է նաև ծնողների հետ սերտ կապը։ Նրանք նույնպես, պետք է մասնակից լինեն դասարանում տեղի ունեցածին, նպաստելով՝ ընտանիքի, քաղաքի և երկրի տնտեսական կյանքի տարբեր ասպեկտների վերաբերյալ երեխաների գաղափարների ընդլայնմանը։ Դա հնարավոր է հեշտացնել հատուկ տնային աշխատանքների միջոցով, որի ընթացքում երեխաները կխորհրդակցեն, կքննարկեն հնարավոր լուծումները և դրանք ապացուցելու եղանակները իրենց ծնողների հետ։

Ծնողների հետ աշխատելիս առաջարկում ենք տարբեր մոտեցումներ՝ բանավոր կամ գրավոր տեղեկատվություն դասընթացի բովանդակության վերաբերյալ, դասերի արդյունքների ամփոփում, խորհրդատվություններ, հանդիպումներ, մրցույթներին նրանց ևս մասնակից դարձնել, քննարկումների կազմակերպում և ծնողների միջև փորձի փոխանակում։

Աշակերտները գործնականում առնչվում են գին, ապրանք, արժեք, դրամ, բյուջե հասկացությունների հետ։

Ֆինանսական կրթության դասավանդման գործընթացում մեծ նշանակություն ունի տվյալ նյութի ընկալման դյուրին, հարմարվետ և հետաքրքրաշարժ ձևը՝ խաղը։ Խաղը

խթան է հանդիսանում՝ նպաստելով աշակերտների ֆինանսական գործունեության զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի նպատակն էր տարրական դասարանների մաթեմատիկական կրթության համատեքստում ֆինանսական բաղադրիչի գործառույթների ուսումնասիրումն ու վերհանումը:

Տեսական հետազոտթուայն ընթացքում եկանք այն եզրահանգման, որ՝

- Ֆինանսական կրթության ամենատարածված և ամենաարդյունավետ ձևերից մեկը դրա իրականացումն է դպրոցներում:
- Ներկայիս ժամանակաշրջանը առանձնանում է շուկայական համակարգով և հարաբերություններով, ուստի ֆինանսական գրագիտությունը շատ կարևոր է և ակտուալ:
- Ֆինանսական կրթությունն անհրաժեշտ է սկսել դպրոցից, քանի որ՝ սովորույթը հեշտ է ներդնել դպրոցից և այն դարձնել որպես մշակույթ դպրոցականի մոտ: Դպրոցական տարիքից երեխաները սովորում են խնդիր, առաջադրանք ստանալ և լուծումներ փնտրել: Սովորում են առնչվել այնպիսի խնդիրների հետ, որոնց մասին մինչ այդ ոչ մի տեղեկություն չեն ունեցել: Սովորում են բյուջե կազմել, պլանավորել իրենց ծախսերը և վերլուծել որևէ կարևոր որոշում անելուց առաջ: Հենց այս հանգամանքն է դպրոցականի ֆինանսական կրթումը դարձնում անփոխարինելի:
- Ֆինանսական կրթումը կարևոր է ապահովել առնվազն տարրական դպրոցի միջին դասարաններից (երբ երեխան սովորում է հաշվել) սկսած մինչև ավագ դպրոցի բարձր դասարանները:
- Քանի որ ֆինանսական կրթման ծրագիրը ինտեգրվել է առանձին առարկաներում, ապա անհրաժեշտ է նաև կիրառել մեթոդներ, որոնք թույլ կտան գնահատել աշակերտի ֆինանսական գիտելիքները համալիր ձևով:
- Ֆինանսական կրթության հիմնական գործառույթը աշակերտին տալ ֆինանսական գրագիտություն, պատկերացում այն մասին, թե ինչ է բյուջեն, ինչ մասերից է այն բաղկացած, արդյունքում կրտսեր դպորցականը սկսում է ճանաչել թղթադրամները և մետաղադրամները, տեղեկանում է գին-քանակ-արժեք հարաբերակցությանը, կարողանում է ինքնուրույն գնումներ կատարել և այլն:
- Տնտեսագիտական գրագիտության միջոցով ֆինանսական գրագիտության ձևավորումը նպաստում է վաղվա տեղեկացված, բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորմանը:

Ընդհանրացնելով ուսուցիչների շրջանում հարցման արդյունքների վերլուծությունները, գալիս ենք այն եզրակացության, որ՝

1. ֆինանսական կրթությունն օգտակար է աշակերտների համար, դեռ կրտսեր դասարաններից պետք է երեխային տալ պատկերացում փողի, դրամի մասին, սովորեցնել կատարել ինքնուրույն գնումներ և այլն:
2. Դպրոցական կրթության միջոցով, կարող են ձևավորվել՝ ֆինանսապես գրագետ անձիք:
3. Աշակերտներին ֆինանսական գիտելիքներ փոխանցելու համար, ուսուցիչների մեծ մասը կիրառում են խաղեր:
4. Աշակերտներին գումարի մասին գաղափար տալու համար, ստեղծում են պրոբլեմային վիճակներ:

Ընդհանրացնելով աշակերտների շրջանում կատարված ֆինանսական գրագիտության հետազոտական ստուգման արդյունքների վերլուծությունները, գալիս ենք այն եզրակացության, որ՝

- ✓ Երեխաների 65.9%-ը ունեն ֆինանսական պատկերացման բարձր մակարդակ, որը բավականին հուսադրող արդյունք է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բալայան Ա., Սարգսյան Գ., Սադոյան Ա., Սեյրանյան Ֆ.,Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ, 2019, Երևան, 128 էջ
2. Հակոբյան Ս., Փոքրիկյան Ա., Ղազարյան Շ., ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ, Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» առարկայի ուսուցիչների համար, ԵՐԵՎԱՆ, 2019, 112 էջ:
3. Հայրապետյան Գ.Ս. «Մաթեմատիկայի ուսուցման մեթոդական առանձնահատկությունները տնտեսագիտական թեքումով դպրոցներում և դասարաններում», ատենախոսություն - ԵՐԵՎԱՆ 2002, 171 էջ
4. Հակոբյան Ս. Է., Փոքրիկյան Ա.Լ., Ղազարյան Շ.Մ. Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ «Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ» առարկաների ուսուցիչների համար – Եր.: Միվա-Պրեսս, 2019, 240 էջ:
5. Բյուջեի կատարման կազմակերպում. Դասագիրք / խմբ. Cand. Էկոն.գիտություններ, պրոֆ. Վ.Վ. Կարչևսկին Ֆինանսներ. Դասագիրք / հր. E.V. Մարկինա.- Մ .: ԿՆՈՐՈՒՍ, 2014 .-- 448-ականներ:
6. Ֆինանսական իրավունք. Դասագիրք / խմբ. E.Yu. Գրաչևա, Ն.Ա. Կուֆակովան, Ս.Գ. Պեպելիաևը: https://newsarmenia.am/Հայաստանի դպրոցականներին ֆինանսական կրթություն կմատուցեն:
7. Ս.Ա.Իսկանդարյան և Սվ.Ս.Իսկանդարյան Տարրական դասարաններում խնդիրների ուսուցման-մեթոդիկան ձեռնարկ:
8. Мамута М.В., Овчинников М.А., Курмашева В.В., Евсеева И.Н., Ибрагимова Д.Х., Кузина О.Е., Мартынов В.Г., Иванов О.М., https://www.marketing.spb.ru/mr/education/finance.htm#
9. https://abcfinance.am/teacher/board-game.html
10. https://businessyield.com/ru/finance-accounting/financial-education-importance-and-how-to-get-started-free-courses/ Финансовое образование: важность и с чего начать

11. https://science-education.ru/ru/article/view?id=30146 финансовая грамотность младших школьников: дискуссии о понятии

12. https://emc21.ru/wp-content/uploads/2020/06/Statya-Lavrenteva-L.V.pdf статья современная наука и образование: новые подходы и актуальные исследования; к вопросу повышения финансовой грамотности у младших школьников

13. https://finance.aspu.am/